

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔՐԵԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱ-  
ԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը` կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի  
(զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)` Հանրապե-  
տության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ` Հայաստանի Հանրա-  
պետության արդարադատության նախարարի տեղակալ Վ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական  
դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և  
72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի մարտի  
23-ին Երևանում ստորագրված` Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի  
Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին  
համաձայնագրում ամրագրված պարտավորությունների` Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 03.06.2016թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2016թ. մարտի 23-ին Երևանում՝ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրման իրավական հիմքի ամրապնդման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ քուվեյթյան կողմին տրամադրել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն, եթե այն գործողությունը, որի առնչությամբ դիմում է ներկայացվել, քրեորեն պատժելի է Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության օրենքներով,

- արտակարգ իրավիճակներում՝ մինչև դիմումների բնօրինակները ներկայացնելը, որպես հայցվող կողմ, անմիջապես կատարել իրավական օգնության մասին հեռատիպի, ֆաքսի, էլեկտրոնային նամակի տեսքով կամ հաղորդակցման այլ ձևերով ներկայացված դիմումը և հայցող քուվեյթյան կողմին տեղեկացնել արդյունքների մասին,

- որպես հայցվող կողմ՝ իրավական օգնության տրամադրումը հետաձգելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու պարագայում, ՀՀ կենտրոնական

մարմնի միջոցով այդ մասին տեղեկացնել հայցող կողմին՝ նշելով այդ որոշման պատճառները,

- որպես հայցող կողմ՝ անհրաժեշտության դեպքում ապահովել Համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության տարածք հանձնված կամ դիմումի համաձայն ներկայացած անձի պաշտպանությունը և այլն:

3. Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի մարտի 23-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

21 հունիսի 2016 թվականի  
ՍԴՈ-1285